ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ* (1988-1991թթ.)

Աննա Մկրտչյան

Հրապարակախոսությունը՝ իբրև հանրային կյանքի տարեգրության լավագույն դրսևորումներից մեկը, առանձնահատուկ տեղ գբաղեցրեց հայաստանյան մամուլում նախորդ դարի 80-ականների վերջին և 90-ականների սկզբին: Թեև հրապարակախոսությունը կարևորագույն դերակատարում ունի իրականության բացահայտման գործում [1], սակայն առավել արժեքավորը հասարակությանը հուզող սուր հարցերի և խնդիրների վերհանումն ու քննարկումն է: Հրապարակախոսությունը ոչ միայն մատնաշում է խնդիրը, այլև համախմբում զանգվածներին կազմակերպված և գործնական քայլերի: Այդպես լսարանի մոտ ձևավորվում է առաջնային վերաբերմունք (դրական կամ բացասական) այն փաստերի նկատմամբ, որոնք դառնում են ուշադրության առարկա: Չնայած հրապարակախոսը միայն դրանով չի սահմանափակվում: Գնահատական տալով փաստերին՝ նա ոչ թե տեղեկացնում, այլ բացահայտում է խնդրի էությունը, ակնհայտ առնչություններն այլ փաստերի հետ և ուրվագծում դրա տեղը լուծման ճանապարհին: Այս առումով հրապարակախոսության մեջ գերիշխում է համոզման մեթոդը [2]:

Հրապարակախոսության վերաբերյալ իրարամերժ, երբեմն էլ, իհարկե, իրար լրացնող կարծիքներ կան, բայց դրանց միջով ծգվում է մի գիծ, որն էլ, ըստ հեղինակավոր տեսաբանների, հրապարակախոսության գլխավոր հատկանիշն է: Խոսքն իրականության քաղաքական ընկալման և մեկնաբանման մասին է: Բոլոր այն դեպքերում, երբ թեմաներն ու խնդիրները, անկախ նրանից տնտեսական են, գիտական, բարոյաէթիկական... ստանում են քաղաքական իմաստավորում, գործ ունենք հրապարակախոսության հետ... Այն իր հիմնական խնդիրներն իրականացնելիս համարձակորեն ձեռք է մեկնում ինչպես իրականությունը պատկերներով մեկնաբանելու միջոցներին, այնպես էլ օրինաչափություններով ընկալելու եղանակներին [3]: Թեև հարկ է ընդգծել, որ իրականության քաղաքական ընկալումը հրապարակախոսության գլխավոր, բայց ոչ միակ հատկանիշն է:

Պատահական չէ, որ 1980-ականների վերջին և 90-ականների սկզբին քաղաքական հրապարակախոսությունը մեծ տեղ ուներ հայաստանյան մամուլի էջերում: Կապված ղարաբաղյան շարժման սկզբնավորման, զարգացման, հետագայում նաև պատերազմական շրջանների հետ՝ հրապարակախոսական հոդվածներում փաստական արժեքավոր տեղեկատվություն կա արցախյան հիմնախնդրի վերաբերյալ: Այստեղ, բնականաբար, կարևոր ներդրում ունեն հրապարակախոսի դերը ստանձնած մտավորականները, հիմնականում՝ գրողները: 1988-1991թթ-ին հայաստանյան մամուլում ամենահաճախ հանդիպող հրապարակախոսների անուններն էին՝ Արմեն Հովհաննիսյան, Սիլվա Կապուտիկյան, Զորի Բալայան, Վարդգես Պետրոսյան, Պերճ Ձեյթունցյան:

Վերոնշյալ ժամանակաշրջանում Արցախին նվիրված հրապարակախոսական հոդվածներում գերիշխում էին այն մտահոգությունները, որոնք վերաբերում էին Սումգայիթի և Բաքվի ջարդերին, Արցախ-Ադրբեջան հարաբերություններին՝ ժողովուրդնե-

---

*Հոդվածն ընդունվել է 15.12.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ Ն.Մարտիրոսյանը:

րի բարեկամության խորհրդային կեղծ կարգախոսների բացահայտման համատեքստում, Խորհրդային կենտրոնական իշխանության՝ ամեն ինչ համահարթելու քաղաքականությանն ու դրա վնասներին, ինքնաճանաչողության խորքային ընկալմանն ու ազգային գաղափարախոսության արմատավորմանը, հավաքական կամքի դրսևորմանն ու պահանջատիրական ոգու ձևավորմանը, երկրի տնտեսությանը, սոցիալական վիճակին, կրթությանը և այլ հարցերի: Քաղաքական հեռանկարները, ժողովրդի ներկան և ապագան, հասարակական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառները, ինչպես նաև սոցիալական օրեցօր սրվող խնդիրները ներկայացնելիս մամուլը և հրապարակախոսները տարբեր մոտեցումներ էին դրսևորում՝ փաստերի վերլուծությունից մինչև հոգեբանորեն ազդեցիկ կոչեր և այլն:

Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին հայաստանյան մամուլում տպագրվող և դարաբաղյան շարժմանն առնչվող հրապարակախոսությունն աչքի է ընկնում մի քանի հստակ շեշտադրումներով: Այդ առումով հարկ ենք համարում առանձնացնել հետևյալները.

- *Արցախի պատմական պատկանելությունը Հայաստանին,*
- *Ադրբեջանցի պատմաբանների նենգափոխած պատմությունը և հայ մտավորականների փաստարկված արձագանքը,*
- *Սումգայիթյան ջարդեր և դրան հաջորդած դատավարություն,*
- *Սպիտակի երկրաշարժ և դարաբաղյան շարժում,*
- *Բաքվի ջարդեր,*
- *Միասնականության գաղափարի, հավաքական կամքի դրսևորում և դարաբաղյան շարժման արժևորում:*

Դարաբաղյան շարժման սկզբից ի վեր հայ մտավորականներն առանձնահատուկ շեշտադրում են հենց Արցախի պատմական պատկանելության հարցը: Սա թերևս առանցքային է այդ շրջանի հրապարակախոսական գրեթե բոլոր հոդվածներում: Ընդ որում խնդիրը ոչ միայն պատմաբանների (Բ. Ուլուբաբյան, Հ. Սիմոնյան և ուրիշներ), այլև գրողների տեսադաշտում էր: Մասնավորապես Պերճ Զեյթունցյանի հրապարակախոսության մեջ դա առավելապես դրսևորվում է հայոց պատմության անցյալի հերոսների և նրանց գործի արժևորմամբ[*]*, հայկականության գաղափարի շեշտադրմամբ. «Անգնահատելի է հայ հերոսների ներդրումը հայի լինելիության գործում»: Ոչ միայն պատմական պատկանելության, այլև ազգային խնդիրների մասին խոսելիս Զեյթունցյանն առանձնանում է յուրահատուկ զգացմունքայնությամբ: Հուզական, միևնույն ժամանակ փաստարկված խոսքը, հայ ժողովրդի պատմության էջերից արված մեջբերումները կարևոր ազդակներ էին հաղորդում ընթերցողին, ստիպում դառնալ համախոհ, ինչը և հրապարակախոսական հոդվածի հիմնական նպատակներից է [4]: Զեյթունցյանը հավատացած էր, որ պատմական արդարությունը հայերի կողմն է, և այդ գաղափարը շեշտում էր իր յուրաքանչյուր հոդվածում:*

Արցախի պատմական պատկանելության հարցի ներկայացումը Զորի Բալայանի հրապարակախոսության մեջ հստակ դրսևորում ունի: Հրապարակախոսն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում երկրամասի պատմության ակունքներում մեր նախնիների ծավալած ազատագրական կռիվների մասին խոսելիս՝ ընդգծելով «հայության կյանքում ազգային-ազատագրական շարժումների բացառիկ կարևոր դերը»[5]: Պա-

---

[*] Առանց տեղեկատվական առիթի 1988թ.-ին Զեյթունցյանը խոսեց Սարդարապատի հերոսամարտի մասին:

տահական չէ, որ Բալայանը դարաբաղյան հիմնահարցը դիտարկում է պատմական արդարության տեսանկյունից և «Ինչից և ինչպես սկսվեց այս ամենը» [6] հասկանալու համար հռետորական հարց հնչեցնում՝ «Ու՞մ հետ ապրել» [7]:

Վարդգես Պետրոսյանը, իբրև պատմական պատկանելության վկայություն, Լեռնային Ղարաբաղի 1611 հայկական հուշարձանների գոյության հարցն է հնչեցնում, որոնք բարբարոսաբար «ավերվել ու դանդաղ ավերվում են ադրբեջանցիների կողմից»[8]: Գրողին խիստ մտահոգում էր հայկական բազմադարյա մշակույթի կորստյան վտանգը:

Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսական հոդվածներում անցյալի պատմական շեշտադրումներն իրենց տեղը զիջում են հայ ժողովրդի հավերժության գաղափարի հանդեպ ունեցած անսահման հավատին, ներքին մեծ ուժին, մաքառումներին: Պատահական չէ, որ Կապուտիկյանի հրապարակախոսությանը բնորոշ են ազգային նկարագրի շեշտվածությունն ու քաղաքացիական խիզախությունը: Կապուտիկյանի՝ հատկապես այդ շրջանի հրապարակախոսական գործերում, ինչպես նաև պոեզիայում, «Հայաստանը հայ ժողովրդի հարատևող գոյության խորհրդանշանն է»:

Նշյալ խնդրի ներկայացման հարցում մի փոքր այլ մոտեցում ունի Արմեն Հովհաննիսյանը: Այդ առումով հատկանշական է նրա հրապարակախոսական շեշտադրումը պատմական արժեքավոր փաստաթղթերի, վկայությունների, սկզբնաղբյուրներից արված մեջբերումների վրա. «Լրացուցիչ փաստաթղթերի պակաս չի զգացվելու, ինչքան էլ ադրբեջանցի ակադեմիկոսների սրտով չլինեն պատմական զուգահեռները» [9]: Հովհաննիսյանը մի կողմից արժևորում է արցախահայության ծավալած ազգանվեր գործունեությունը, քանի որ, ըստ նրա, «մեր երթին վախճան չկա, մեր արդար գործին՝ պարտություն» [10], մյուս կողմից՝ համոզիչ փաստարկներ է բերում առ այն, որ երկրամասի հայկական լինելու վերաբերյալ հիշատակումները, նաև թուրք բարբարոսների կողմից հայերին տեղահան անելու փորձերը բազմիցս հաստատվել են հայ և օտարազգի հեղինակների կողմից (ռուս գրողներ Ե. Պախոմով. «Ազերբայջան անվանումը երբեք չի տարածվել Արաքսից հյուսիս ընկած հողերի վրա: Միայն 1917թ.-ին, անդրկովկասյան կոմիսարիատը Վրաստանը, Հայաստանը և Արևելյան Անդրկովկասը մասնատելիս, ենթադրություն առաջացավ ստեղծել մի պետություն, որը կմիավորեր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Պարսկաստանի այսպես կոչված «ազերբայջանցի թուրքերին»: Այդ պետությանը նախնական կարգով տրվեց «Ազերբայջան» անվանումը… որը թողնվեց ավելի լավը չգտնելու պատճառով…» [11], Ե. Եվտուշենկո. «Հայերի աչքերի խորքում հայ ժողովրդի դարավոր տխրությունն է ամբարված: Այդ տխրությունը գալիս է ասպատակությունների, արյունահեղ կոտորածների ժառանգական հիշողությունից…» [12] և Մ. Դուդին. «Հայաստանը մարդկության սերը վաստակել է իր տառապանքով և իր բազմադարյա պատմության արիությամբ»[13], Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդով, տնտեսագիտության դոկտոր Վ. Շեյնիս [14] և ուրիշներ):

Հովհաննիսյանը ոչ միայն Արցախի հայկական պատկանելությանն է անդրադառնում, այլև անպատասխան չի թողնում ու մշտապես արձագանքում է ադրբեջանցի շատ հեղինակների գիտական հոդվածներում առկա կեղծ փաստերին [15], որոնք առնչվում էին ինչպես Արցախին, այնպես էլ Հայաստանին: Որպես կանոն՝ նա հետևում էր ադրբեջանական հեռուստատեսությանը, ռադիոյին, մամուլին ու դրանցում տեղ գտած հրապարակումներին («Թուփխանան ժողովրդի պատմական հիշողությունն է» - «Բակինսկի ռաբոչի», 20 նոյ., 1988թ.; «Մեկ անգամ ևս Թուփխանայի մասին», «Բակինսկի ռաբոչի», 26 նոյ., 1988թ. և այլն), նաև գիտական շրջանակներում շրջանառվող փաստարկներին՝ արժանի պատասխան տալով շինծու տեղեկատվությանը.

«…Անհրաժեշտ եմ համարում ժամանակին քննել ու պարզաբանել հարևան հանրապետության մամուլի էջերում վաղուց խմորվող և ահա, ակադեմիական «գրչին» վստահված փաստերն ու իրադարձությունները տակնիգլուխ հրամցնելու նկրտումները, այլևս ծանծրալիության աստիճան ծանոթ դաջվածքով…» [16]: Այդպիսի հրապարակումները Հովհաննիսյանը մանրամասն քննում է, վերլուծում և հակափաստարկների, պատմական արժեքավոր փաստաթղթերի, վկայությունների, մեջբերումների միջոցով ապացուցում դրանց անհիմն ու կեղծ լինելը, քանի որ վստահ էր, որ «ազերբայջանական մամուլում և ոչինչ «պատահաբար» չի տպագրվում» [17]:

Զեյթունցյանն ուշադրությամբ հետևում էր մամուլին, նաև արտասահմանյան պարբերականների հրապարակումներին և անմիջապես արձագանքում Հայաստանին ու հայությանն առնչվող հոդվածներին: Նրան հատկապես անտարբեր չէին թողնում թուրք-ադրբեջանական քարոզչամեքենայի՝ հայոց պատմությանն առնչվող մեքենայությունները: Մի դեպքում հեղինակը ցավով արձանագրում էր «Ադրբեջանում լույս տեսած մի հերթական նենգ ու ստախոս» գրքի հրատարակումը [18], մեկ այլ դեպքում ծավալուն հոդվածի նյութ է դառնում ադրբեջանցի գրողի արած հայտարարությունը, թե «Հայ ժողովուրդը մազոխիստ է» [19]:

Գիտակցելով տեղեկատվական հարձակումներին հակազդելու կարևորությունը՝ Զեյթունցյանն իր հոդվածներում հաճախ էր մեջբերում հայոց պատմությունից, պաշտոնական փաստաթղթերից, նաև փաստարկված ընդդիմախոսում «պատմություն հնարելու» ադրբեջանական մոլուցքը, որը, ըստ հեղինակի, «նախ և առաջ հանցանք է սեփական ժողովրդի առջև»: Գրողի զայրույթը հաճախ ուղղվում էր «Պրավդա», «Իզվեստիա» թերթերին և կենտրոնական հեռուստատեսության «Ժամանակ» տեղեկատվական-վերլուծական ծրագրին [20]: Այս ամենի հետ մեկտեղ Զեյթունցյանը հաճախ է ցավ հայտնում, որ իր հերթական հոդվածը «Դարձյալ պիտի լույս տեսնի միայն հայերեն լեզվով»: Արտաքին լսարանին ուղղված խոսքը միշտ չէ, որ հասնում էր հասցեատերերին [21]:

Պետրոսյանին ևս մտահոգում էր ադրբեջանական «պատմաբանների» կեղծարարությունները, որոնք միտված էին հակահայ քաղաքականության ձևավորմանը: Դրա դրսևորումը նրա սուր, քննադատական հոդվածներն էին, որոնցում հեղինակը ոչ այնքան հուզական շեշտադրումների, որքան պատմական էքսկուրսների միջոցով և համոզիչ հերքումներով արձագանքում էր ադրբեջանական կեղծարարություններին՝ հիմնավորված խոսելով պատմական անցյալի ու ստեղծված իրավիճակի մասին՝ մեկ անգամ ևս հաստատելով. որ Արցախն անհիշելի ժամանակներից հայի բնօրրանն է եղել և այդպիսին պիտի լինի ապագայում: Ըստ նրա՝ «Տասնամյակներ շարունակ մենք հանդուրժեցինք կեղծարարությունը, աններելի մոռացության մատնեցինք Անդրանիկ զորավարի սրբազան անունն ու հիշատակը, լռելու տվեցինք Բաքվի 1918թ. կոտորածները, հայկական Շուշիի կործանումը…: Անցյալ տասնամյակներում պատմաբանները զրկված էին կեղծարարներին պատասխանելու իրավունքից, նման դեպքերում մեզ խորհուրդ էր տրվում ձեռնպահ մնալ հանուն… եղբայրության» [22]:

Ղարաբաղի հայկական երկրամասի խնդիրը մշտապես ուշադրության կենտրոնում պահելով՝ Կապուտիկյանն իր գործունեության ամբողջ ընթացքում բաց նամակներով (ինչպես հայ պաշտոնյաներին, այնպես էլ Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեթչերին, ԽՍՀՄ ղեկավար Գորբաչովին և ուրիշներին), դիմում-բողոքներով բազմիցս դիմել է Խորհրդային Միության, նաև Ադրբեջանի ղեկավարությանը՝ պահանջելով պատշաճ վերաբերմունք ԼՂԻՄ-ի առջև ծառացած խնդիրներին: Տարբեր զրույցների գրառումները, հայկական հեռուստատեսությամբ հնչեցրած ելույթները, որոնք

նրա հրապարակախոսության անբաժան մասն են կազմում, աչքի էին ընկնում խոսքի պատկերավորությամբ, համարձակությամբ: Ս. Կապուտիկյանն ակտիվորեն արձագանքում էր ադրբեջանցի պատմաբանների և կենտրոնական մամուլի այն հրապարակումներին, որոնք ընդգծված հակահայկական բնույթ էին կրում, որտեղ շարժումը վարկաբեկող բնորոշումներ էին հնչեցվում: Անվանի մտավորականը կենսականորեն անհրաժեշտ էր համարում «ճշգրիտ տեղեկատվության հաղորդումը կոնֆլիկտի գոտուց»[23] և քննադատում էր կենտրոնական մամուլի և հեռուստատեսության դեպքերի մակերեսային լուսաբանումը [24]:

1988թ. փետրվարին Սումգայիթում իրականացված ոճրագործությունը խորը հետք թողեց այդ շրջանի հրապարակախոսության վրա: Մտավորականների խոսքն ընդգծված սումգայիթյան շեշտադրումներ ստացավ: Ավելին՝ մամուլում՝ մասնավորապես հրապարակախոսական հոդվածներում, ժամանակը նոր բաժանում ստացավ՝ Սումգայիթից առաջ և հետո: Նման մոտեցումն առավելապես դրսևորվեց Արմեն Հովհաննիսյանի հրապարակախոսական հոդվածներում, ով դարաբաղյան շարժումն ու դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները, հասարակական-քաղաքական տեղաշարժերը դիտարկում էր հենց այդ համատեքստում՝ [25] ընդգծելով սումգայիթյան «ջրբաժանի» նշանակությունը:

Հրապարակախոսների համար սումգայիթյան ողբերգությունը նաև առիթ հանդիսացավ, որ հերթական անգամ բարձրաձայնեն Հայոց ցեղասպանության հարցը: Վարդգես Պետրոսյանի դեպքում չափազանց ազդեցիկ էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում (1988թ. հուլիսի 18) հնչեցրած ելույթը, որում սումգայիթյան ոճրագործությունը նա որակեց «ցեղասպանություն» ու դատապարտեց Քաղբյուրոյի և Գորբաչովի կրավորական պահվածքը, որոնք քաղաքական գնահատական չտվեցին Սումգայիթին [26]:

Սումգայիթում տեղի ունեցած եղեռնագործության մասին խոսելու առիթը երբեք բաց չթողեց նաև Զորի Բալայանը, ով քաղաքական տարբեր հարթակներից հնչեցրեց «չդատապարտված Սումգայիթի» [27] մասին:

«Ո՞վ է մեղավոր Սումգայիթի համար» [28] հարցը մտահոգում էր հրապարակախոս Սիլվա Կապուտիկյանին: Նա անդրադառնում էր նաև կենտոնական մամուլի և հեռուստատեսության՝ հատկապես սումգայիթյան դեպքերի մակերեսային լուսաբանմանը: Ավելին՝ «Իզվեստիա» թերթում Ղարաբաղի բնակչությանն ուղղված «հավասարապես խաղաղվելու» հորդորը Կապուտիկյանին մղեցին գրելու ռուս մտավորականությանն ուղղված իր հանրահայտ «Բաց նամակ»-ը: Ժողովրդի տրամադրությունները, նաև Կապուտիկյանի այս շրջանի գործունեությունն ու հոգեվիճակը առավելագույնս բնութագրում էր հենց այդ նամակը, որը թեև չտպագրվեց խորհրդային մամուլում, սակայն, թարգմանաբար տարածվելով, լայն ճանաչում ու արձագանք գտավ: Բանաստեղծուհին, գնահատելով իր գործընկերների մտահոգությունն ու տագնապը, երկու ժողովուրդներին խաղաղեցնելու ձգտումը, անընդունելի համարեց «հավասարապես» բառը, քանի որ ռուս գրողները, միակերպ գնահատելով երկու հանրապետություններում ծավալված իրադարձությունները, ցույց տվեցին իրենց անտեղյակությունը դեպքերի բուն էության ու պատմական փաստերի վերաբերյալ: Հրապարակախոսը «Հույզեր և բանականություն» հոդվածն անվանեց մեր ժողովրդի համար «հոգևոր Սումգայիթ», քանի որ խեղաթյուրված և միակողմանի էին ներկայացվում փաստերը: Տարիներ անց Ս. Կապուտիկյանը, անդրադառնալով այդ նամակին, նշեց, որ դարաբաղյան խնդրին առնչվող իր բազմաթիվ հոդվածներից, ելույթներից ու դիմումներից ոչ

մեկը չունեցավ այն ներազդող ուժը, մտքի ու զգացումների հագեցվածությունը, էլեկտրականացնող լիցքը, ինչպես այդ նամակը [29]:

Մտավորականները գիտակցում էին սումգայիթյան ոճրագործությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Ավելին՝ նրանց հրապարակախոսական հոդվածներում, որպես կանոն, մտահոգության ու վրդովմունքի կողքին գրեթե միշտ առկա էին լավատեսական տրամադրությունները, որ մեղավորները կպատժվեն, ու շարժումը կհասնի իր վերջնական նպատակին:

Հերթական անգամ մամուլի, մասնավորապես՝ հրապարակախոսների համար փորձություն էին Բաքվի ջարդերը: Համարձակ, փաստարկված, հստակ ու ծավալուն մեջբերումներով, խիստ բնորոշումներով, արժանահավատ մանրամասներով, պատկերավոր նկարագրություններով, վրդովված, մտահոգ ու միաժամանակ արդարությանը հետամուտ լինելու վճռականությամբ ու անկոտրում կամքով հրապարակախոսները ներկայացրին ու դատապարտեցին Բաքվի ջարդերը (հունվար, 1990թ.): Զ. Բալայանը պահանջեց արդարադատություն՝ հակառակ դեպքում՝ «Աստծո դատաստան»[30]: Հրապարակախոսն Ադրբեջանական ԽՍՀ-ում ծայր առած սանձարձակությունների և Լեռնային Ղարաբաղում ծավալվող այլ իրադարձությունների դեմ դատապարտող հայտարարություններ հնչեցրեց աշխարհի տարբեր քաղաքական ամբիոններից [31]:

Հովհաննիսյանը խորը ցավով էր խոսում «մեծ հեղաշրջումների» ժամանակներում հայերի նկատմամբ իրականացված հերթական ցեղասպանության՝ Բաքվի մասին: «Բաքվական կոտորածները զուր են կոչում հունվարյան, սումգայիթի օրինական շարունակությունն է դա, որն արդեն 70 տարի և 2 տարի շարունակ ծգվում է»: Նրա խոսքով՝ հայերի վերջին բեկորներն էլ մազապուրծ թողեցին «ինտերնացիոնալ» քաղաքը՝ անթաղ տասնյակ զոհեր ծգելով այնտեղ, խուժանի թալանի ճարակ դարձրած իրենց ունեցվածքը [32]:

Ստեղծված իրավիճակի քննության փորձ անելով՝ Վ. Պետրոսյանը ցանկանում էր հասկանալ, թե ինչ է բերելու վաղվա օրը: Նա կանխատեսում էր, որ «90-ի հունվարով սկսվում է արցախյան դրամայի նոր, թերևս շատ ավելի ճակատագրական գործողությունը», ուստի «Նոր սխալների իրավունք մենք այլևս չունենք» [33]:

Ստեղծված իրավիճակում մամուլը և հրապարակախոսները փորձ էին անում ճանապարհ հարթելու հույսի ու հավատի համար: Արմեն Հովհաննիսյանը մի կողմից՝ ցավում էր Սումգայիթի, Բաքվի կոտորածների, յուրաքանչյուր մարդկային կորստի, խեղված ճակատագրի համար, մյուս կողմից՝ արժևորում ղարաբաղյան շարժումը՝ իբրև կարևորագույն իրողություն հայ ժողովրդի կյանքում: Շարժման մեկնարկը ներկայացնելով որպես Երևանում սկիզբ առած փոթորկի առաջին ալիք՝ նա մեծապես կարևորում էր տասնամյակների թմբիրից, անտաբերության և չեզոքության նիրհից արթնացած հանրապետության դերը: Հովհաննիսյանը համոզված էր, որ դեռևս ամբողջության մեջ չի ընկալվել փետրվարի 20-ը: Մի կողմից՝ նրան հուսահատեցնում էին ամենօրյա բառապաշար մտած փախստական, անօթևան, դեռահաս հաշմանդամների և որդեկորույս մայրերի բազմություն, վայրենության զոհ, շրջափակված երկրամաս և հանրապետություն, շրջափակված աղետավայր բառերն ու արտահայտությունները, *մյուս կողմից՝ նրան ոգևորում էր «փետրվարյան մաքրող ու կազդուրիչ շնչառությունը», որը առիթ էր շնորհավորելու Արցախի ազատության մոտալուտ երկամյակը[34]:*

Կարևորելով պատմական արդարության վերհանումը և շեշտադրելով դրան հասնելու ձգտումը՝ հրապարակախոսները գիտակցում էին, որ միասնականությունը, հավաքական կամքը պահանջատիրական ոգի կծնեն, ուստի ոգեշնչման կարիք կար:

Մամուլի էջերում հնչող մտավորականի ձայնը, որտեղ իրականության արտապատկերումը միախառնված էր հուզական տրամադրություններով, ներազդման մեծ լիցքեր էր պարունակում: Հուզական ու զգացմունքային լինելուց բացի՝ այդ շրջանի հրապարակախոսական հոդվածներն առանձնանում էին նյութի և հարցադրումի լայն ընդգրկումով ու հրատապությամբ, հրապարակախոսների քաղաքացիական ակտիվ կեցվածքով, հստակ ու խիզախ դիրքորոշումով, իրավիճակի ճշգրիտ գնահատմամբ, մեր երկրի նկատմամբ անսահման սիրով, հավատով ու նվիրվածությամբ [35]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Полонский А.В. Публицистика как особый вид творческой деятельности, 2008, БелГУ, №11, вып.1. стр. 59:
2. Скуленко М.И. Убеждающее воздействие публицистики (Основы теории), Киев, 1986, стр. 3:
3. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ Ա, Եր., 1999, էջ 6:
4. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ ԺԲ, Եր., 2012, էջ 15:
5. «Ավանգարդ», 29 սեպտեմբերի, 1989:
6. «Խորհրդային Հայաստան», 7 փետրվարի, 1990:
7. Նույն տեղում, 5 հոկտեմբերի, 1989:
8. «Հայրենիքի ձայն», 2 նոյեմբերի, 1988:
9. «Երեկոյան Երևան», 25 մայիսի, 1989:
10. «Երեկոյան Երևան», 30 դեկտեմբերի, 1989:
11. Նույն տեղում, 25 մայիսի, 1989:
12. Նույն տեղում, 31 դեկտեմբերի, 1988:
13. Նույն տեղում, 13 դեկտեմբերի, 1988:
14. Նույն տեղում, 27 հոկտեմբերի, 1988:
15. «Երեկոյան Երևան», 21 նոյեմբերի, 1988:
16. Նույն տեղում, 25 մայիսի, 1989:
17. Նույն տեղում, 25 մայիսի, 1989:
18. «Գրական թերթ», փետրվար, 1990:
19. «Սովետական Հայաստան», 23 նոյեմբերի, 1988:
20. «Խորհրդային Հայաստան», 26 նոյեմբերի, 1989:
21. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ ԺԲ, Եր., 2012, էջ 17:
22. «Խորհրդային Հայաստան», 17 օգոստոսի, 1989:
23. Կապուտիկյան Ս., «Էջեր փակ գզրոցներից», Եր., 1997, էջ 406:
24. Նույն տեղում, էջ 437:
25. «Ավանգարդ», 9 փետրվարի, 1990թ., Եր., «Մեր աստեղային եղբայրը» ամբողջությամբ նվիրված է հենց այդ ժամանակային բաժանմանը:
26. Համբարձումյան Ս. «Երեք տարի սիրո և մահվան սահմանագծին», Եր., 1988: Վ. Պետրոսյանը ելույթ ունեցավ այդ նիստում և նման որակումից հետո Գորբաչովը կոպտորեն ընդհատեց Պետրոսյանին: Մամուլը չգրեց նրա համարձակ ելույթի մասին, փոխարենը այդ պատմական նիստը հետագայում մանրամասն նկարագրեց

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ, հայկական պատգամավորական խմբի ականավոր դեմքերից մեկը՝ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը:
27. «Ավանգարդ», 28 փետրվարի, 1990:
28. Կապուտիկյան Ս., «Էջեր փակ գզրոցներից», Եր., 1997, էջ 663:
29. «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր), Պրակ ԺԲ, Եր., 2012, էջ 35:
30. «Ավանգարդ», 11 փետրվարի, 1990:
31. «Խորհրդային Հայաստան», 4 փետրվարի, 1990:
32. «Երեկոյան Երևան», 17 հունվարի, 1990:
33. «Խորհրդային Հայաստան», 24 փետրվարի, 1990:
34. «Երեկոյան Երևան», 30 դեկտեմբերի, 1989:
35. Նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակախոսությունը հայաստանյան մամուլում՝
Ղարաբաղյան շարժման համատեքստում (1988-1991թթ.)

Աննա Մկրտչյան

Այս հոդվածում կոնկրետ օրինակների միջոցով ներկայացվում է հրապարակախոսության կարևոր դերն ու նշանակությունը հայաստանյան մամուլում նախորդ դարի 80-ականների վերջին և 90-ականների սկզբին:

Ղարաբաղյան շարժման տարիներին հրապարակախոսի դերը ստանձնած հայ մտավորականներն իրենց հոդվածներում ոչ միայն մատնանշում էին առկա խնդիրները, այլև համախմբում լսարանին և մղում գործնական քայլերի:

Արցախին նվիրված հրապարակախոսական հոդվածներում մտահոգությունների կողքին հոգեբանորեն ազդեցիկ կոչեր էին, լավատեսական տրամադրություններ:

Բանալի բառեր՝ *հրապարակախոսություն, մտավորական, ղարաբաղյան շարժում, պատմական պատկանելություն, հրապարակախոսական հոդվածներ, Արմեն Հովհաննիսյան, Զորի Բալայան, Սիլվա Կապուտիկյան, Վարդգես Պետրոսյան, Պերճ Զեյթունցյան:*

РЕЗЮМЕ

Публицистика в прессе Армении в контексте
карабахского движения (1988-1991)

Анна Мкртчян

В данной статье на конкретных примерах показана роль публицистов в армянской прессе конца 80-х начала 90-х гг. прошлого века. Во время карабахского движения публицистика посредством статей, написанных интеллигенцией, не только анализировала насущные проблемы, но и сплачивала народ и мотивировала на действенные шаги.

В статьях об Арцахе, наряду с сопереживанием также содержатся эмоциональные призывы и оптимистический настрой.

Ключевые слова: *публицистика, интеллигент, карабахское движение, историческая принадлежность, публицистические статьи, Армен Оганнисян, Зори Балаян, Сильва Капутикян, Вардгес Петросян, Перч Зейтунцян.*

SUMMARY
Publicism in the Armenian press in the context of the Karabakh movement (1988-1991)
Anna Mkrtchyan

The article focuses on the role of journalism in the Armenian press in the late 80s and early 90s. During the Karabakh movement journalists not only analysed urgent problems, but also rallied people and motivated on practical steps.

Alongside empathy the articles devoted to Artsakh are aslo marked by optimism and emotional appeals.

Keywords: *journalism, intellectual, the Karabakh movement, historical affiliation, journalistic articles, Armen Hovhannisyan, Zori Balayan, Silva Kaputikian, Vardges Petrosyan, Perch Zeytuntsyan*